ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱԺ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ

Հունվարի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանի հետ:

Նորին Սրբությունը շնորհավորեց ԱԺ նախագահին՝ Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի կողմից արժանացած մրցանակի առիթով:

Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ, արժանանալով նման պարգևի, պրն Խաչատրյանը, իբրև ԱԺ նախագահ, առավել նախանձախնդրորեն հետամուտ կլինի քրիստոնեական արժեքների տարածման գործին՝ նպաստելով կրոնական կազմակերպությունների գործունեության համար օրենսդրական համապատասխան դաշտի ստեղծմանը: Նորին Սրբությունը միաժամանակ համոզմունք հայտնեց, որ միջազգային կազմակերպության մրցանակը զորացնում է ուղղափառ ժողովուրդների միջև եղբայրությունը՝ ի նպաստ բարոյական արժեքների ամրապնդման և մարդկության կյանքում տեղ գտած տագնապահարույց խնդիրների համատեղ ջանքերով լուծման:

Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնելով շնորհավորանքի համար՝ ԱԺ նախագահը նշեց, որ Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի կողմից իրեն տրված պարգևը բարձր գնահատական է առաջին հերթին ժողովրդին, Եկեղեցուն ու պետությանը:

Անդրադառնալով Եկեղեցի-պետություն հարաբերություններին, ԱԺ նախագահը շեշտեց օրենսդրորեն Հայ Առաքելական Եկեղեցուն աջակցելու անհրաժեշտությունը, որպեսզի առավել հստակեցվի Մայր Եկեղեցու առաքելությունն ու դերը ժողովրդի կյանքում:

Հանդիպումն ավարտվեց աղոթքով: Նորին Սրբությունը Հայրապետական իր օրհնությունը տվեց ԱԺ նախագահին՝ նրան ընծայելով նաև վերջերս Մայր Աթոռի հրատարակությամբ լույս տեսած Մաղաքիա արքեպս. Օրմանյանի «Ազգապատում» եռահատորը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ